ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունիսի 2024 թվականի N 873-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 843-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱՍԷԴԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 843-Ա որոշման հավելվածը 78-րդ կետից հետո լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 79-րդ և 80-րդ կետերով՝

«

79.	8462230009	Մետաղի կռման հիդրավլիկ մամլիչ թվային ծրագրային կառավարմամբ	Մետաղի կռման հիդրավլիկ մամլիչ թվային ծրագրային կառավարմամբ	հատ	1	ԱՄՆ, Իրան, Թայվան, Չինաստան, Թուրքիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Բելգիա, Նիդերլանդներ, Ավստրիա, Լեհաստան	ԱՄՆ, Իրան, Թայվան, Չինաստան, Թուրքիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Բելգիա, Նիդերլանդներ, Ավստրիա, Լեհաստան, Վրաստան	70 000 000	
80.	8426190000	Պնևմատիկ վերհան թերթավոր ապակիների բարձրացման և տեղափոխման համար	Պնևմատիկ վերհան թերթավոր ապակիների բարձրացման և տեղափոխման համար	հատ	1	ԱՄՆ, Իրան, Թայվան, Չինաստան, Թուրքիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Բելգիա, Նիդերլանդներ, Ավստրիա, Լեհաստան	ԱՄՆ, Իրան, Թայվան, Չինաստան, Թուրքիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Բելգիա, Նիդերլանդներ, Ավստրիա, Լեհաստան, Վրաստան	35 000 000	

»:

2. Հավելվածի «Ընդամենը» պարբերության մեջ «10 096 905 099» թիվը փոխարինել «10 201 905 099» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ